ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 հուլիսի 2017 թվականի N 147-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 120-րդ հոդվածի 2-րդ մասի, «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 102-րդ հոդվածի, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2016 թվականի սեպտեմբերի 29-ի N 59-Ա որոշումը՝ **որոշում եմ.**

1. Նշանակել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի խոշորացված *Չարենցավան, Եղվարդ, Բյուրեղավան, Ջրվեժ, Ակունք, Մեղրաձոր* համայնքների ղեկավարների և համայնքների ավագանիների անդամների ընտրություններ՝ *2017 թվականի նոյեմբերի 5-ին*:

2. Առաջարկել *թիվ 26, 27, 28, 29* տարածքային ընտրական հանձնաժողովին՝ հայտարարել ընտրության օր, սահմանված կարգով կազմակերպել ընտրությունների նախապատրաստման և անցկացման հիմնական միջոցառումներ:

3. Առաջարկել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի *Չարենցավան, Ալափարս, Արզական, Բջնի, Կարենիս, Ֆանտան, Եղվարդ, Արագյուղ, Բուժական, Ջովունի, Ջորավան, Սարալանջ, Բյուրեղավան, Ջրաբեր, Նուռնուս, Ջրվեժ, Ջովք, Ձորաղբյուր, Ակունք, Ձառ, Ջովաշեն, Կապուտան, Կուրայք, Հատրիս, Նոր գյուղ, Սևաբերդ, Մեղրաձոր, Աղավնաձոր, Արտավազ, Հանքավան, Մարմարիկ* համայնքների ղեկավարներին՝ ընտրությունների նախապատրաստման և անցկացման հիմնական միջոցառումների ժամանակացույցի համաձայն իրականացնել համայնքի ղեկավարին վերապահված լիազորությունները:

4. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության պետի վրա:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում *2017 թվականի օգոստոսի 25-ից*:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ա. ԳՈՒԼՈՅԱՆ

2017 թվականի հուլիսի 11
ք. Հրազդան